



### 35. ՄՇԱԿ ՏՂԻ ՀԵՔԻԱԹ

Կէղնի-չէղնի հարուստ ու շար իշխան մե կէղնի, խորոտ աղջիկ մե կունենա, իմալ լիալուսնակ: Աղջկա տանելու վախթ օր գիկա՝ քոշկ ու սարի բոլորտան շրհեկ-ջմրիկ տղեկներ կը դվըռնին, խաղ կը կանչին, «ա՛խ» կը քաշին, հմա աղջիկ մեկում լե շուղե, շրմքի ծոռկ կէղնի մշակ տղի մե վրեն:

— Իմալ էկեր ին, թըղ հմալ դառնան ուրանց տներ:

Կըսե աղջիկ, դփանջարեն կը փակե, ուր ջառուն կը ճամպե մըտ մշակ տղեն, թանրի կէնե, օր զսիրտ շը կոտրե, շըռըկի, կա-չկա ինքն է ու ինք: Զառին կէրթա մըտ մշակ տղեն, զաղջկա սրտի դի-լաք կը պնդե, դառնա գիկա քոշկ:

Սրտի սավդեն գողտուկ շը՝ մնա, գելնա ալենի: Իշխան գիմնա, օր ուր աղջիկ ծոռի վըր մշակ տղի մե, կը կատղի քընց շամբի վե-րու խոզ, կը կանչե զաղջկան. ուր մոտ, չոտ կը զարկե գետին, կը բոռա, խանջար կը քաջե՝ վախեցու, հմա աղջիկ զաչքեր բիւա շը թարթե:

— Դու վի՛րն է կը սիրես, շըս գի՛նա օր էնի մշակ-սարակ է, գու՛ իշխանի աղջիկ: Էդ խըդեր մեծ-մեծ իշխըներ, հարուստ մարդիկ կը դառնան քու բոլորտան, չորի՛ մեկն ու մեկուն շըս չուզի, էդ մշկուն գուզիս:

— Հա՛, էդ մշկուն գուզիմ,—կըսե աղջիկ,— իմ սիրտ կպերե ինոր, սրտի դեմ ի՛նչ կոնաս էնի:

Հեր քեզիկի կը կատղի, զաղջիկ կը տանե թալե մութ բռնատուն.  
հրամանք կէնե հաց շիտան, ջուր շիտան, բալքի ուր մտքեն քետ կա-  
նի, զմշակ տղեն մոռնա: Բռնատուն լե չը կոնա մոռցու— ջառին  
գիկա-կէրթա, հաց ու ջուր կը տանե, խաբար կը տանե-բերե: Հեր  
գիկա աղջկան կըսե.

— Յողի պտի թողնիմ՝ անոթի մեռնիս, զմշկուն մոռնաս:

— Կը մեռնի՛մ, հմա չըմ մո՛ռնա,— պատասխան կիտա աղջիկ:  
Իշխան կը տեսնա, օր աղջիկ ուր դընին չի գա, կը թքե, մրե,  
գեղնա դուս, ծառաներուց մեկին կը ճամպե զմշակ տղին բերե: Մշակ  
տղեն գիկա, կը կանի իշխանի քառչե, կըսե.

— Իդա՛ ես, իդա՛ դու, ըսե զքու մտադրութեն:

— Քու քառեջ պայման կը դնիմ,— կըսե իշխան,— թե կըոցար  
ջուր հանի վըր բանձր պալին՝ զհող կակըղցուցիր, բար ու պտուղ  
հասուցիր՝ զիմ աղջիկ կիտամ քըզի, չըկոցար՝ քըզի սպանել կիտամ:

— Խաբուլ իմ,— կըսե մշակ տղեն:

Մշակ տղեն կը դառնա կէրթա, աստծու ղորութենով կը հըն-  
ճըրվորվի — հմալ մեքենա մե կը շինե, օր ներքեվի առվից զջուր  
կառնե մըջ փողըրկին, կը զարկե հանե շուրի պալի կատար, կը  
ջրե զհողն ու վախտին թուռլու-թուռլու բար ու պտուղ կը հասու:  
Մշակ տղեն կուրախնա, զբար ու պտղից կը ճամպե իշխանին, թե  
դրուկ պայման կատարե՛ր իմ, զաղջիկ պտի տաս:

Հարուստ՝ օր խալք շէղնի, հարուստ չը կոնա էղնի: Խալքութե-  
նով, ծեծով-ջարդով՝ զաղջկան կիտա ուրիշ մարդու մե: Մշակ տղեն  
գիմնա, օր խաբվեր է, թիակ կը թալե վեր, թիակ գիջնա վըր վզին,  
գլուխ կը կտրե ջանդըկուց, կը թալե մեկ կողմ: Տղեն՝ իշխանի  
քերեսուց՝ անմուրազ կը մեռնի, շատ տարիներ գիկան-կէրթան, կը-  
սին, թե մինակ աչքերն ին մանցի սաղ-սալամաթ, շուրի քըսօր լե  
զաղջկան կը գաշին, հմա չըն կոնա գտնա:

